տեղս բանդիդ լինելն, գիտեմ որ Ձեր հրամանոն էլ լաւ գիտէք քան զմեզ. մեք միամիտ մեր ճանապարհն գնում. անփորձութիւնս մեր գլուխը ա բերին. ասեմք ուրիշ ազգի սուչ չունի, քաւ լիցի. մեր ազգի արարմունքն է. ահա լալով աչօք եւ դառն արտասուօք հայիմք դատաստանին աստուծոյ...»

8. «Պետր էլէքսէից, բարեպաշտ եւ Քրիստոսասէր յաղթող Թագաւորի» (խնդրում է նրա միջնորդութիւնը. «ծեր եմ, հիւանդ, ապրուստ չունեմ, կերակրող չունեմ, ղարիպ, անլեզու,» որ բռնում է նամակի կէսը)... «Արդ լինի քո մեծութեանդ որ այս խաբարս նոր լսեցինք որ մեր մուվադին մեր մին էրէց ա՝ անումն աւաք Մարգարիչ, որ մեր վաքիլ էր տեղն. նա է մեզ տեղս կապել տվել. փառք աստուծոյ Թագաւորին խային չեմք եւ մարդոյ պարտական չեմք. մեր պատրիարգին հրամանաւ եկեալ եմք այս երկիրս ի վերայ Հայոց ազգին հովիւ... եկինք գնում ենք մեր երկիրն. մեզ տեղս կապել ա տվել էն Երէցն. վասն աստուծոյ խաթեր համար մեզ մին հառ եմ (երեւի՝ ռահմ) արա, փուքր ինչ տնօրութիւն տուր. ես մին ծեր մարդ... Բ. տարի է լալով աչօք նստած եմ... ինձ ուղարկիր Մոսկօվն. ինչ դատաստան ունեմ տեղն տեսնուն...»

9. Նման մի գրութիւն ուղարկել է Յովակիմ եպիսկոպոս եւ Ղազանի ռուս Արքեպիսկոպոսին՝ նրա բարեխօսութիւնը խնդրելով:

Յովակիմ եպիսկոպոսի բանդարկութեան պատճառն էր՝ ինչպէս երեւում է յիշեալ դիւանի գործերից (1718, No. 2, յուլիսի 18), Իսրայէլ Օրիի ընկեր՝ ծանօթ Մինաս վարդապետի մեղադրութիւնը, որի պատճառով 1718[1] թուին Մոսկովից

---

[1] 1718 Փետր. 27ին Յով. եպիսկոպոսը դեռ Մոս-